ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«03» մայիսի 2017 թվականի № 43-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի «Հանքային իրավունք ունեցող կազմակերպությունների միջոցներով Արաքս գետի քայքայված ինժեներական կառուցվածքների վերականգնման առաջնահերթությամբ պայմանավորված՝ գետավազի արդյունահանման հետ կապված խնդիրները կանոնակարգելու մասին» N 352-Ն որոշման պահանջները, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի մարտի 16-ի թիվ 02/24.4/6074-17 և 2017 թվականի մարտի 22-ի թիվ 02/24.4/6612-17 հանձնարարությունները՝ կապված Արաքս գետի հիմնահարցերի միջգերատեսչական հանձնաժողովի կողմից բարձրացված խնդիրների հետ ու Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի մոտ 2017 թվականի մարտի 29-ին անցկացված խորհրդակցության արդյունքում կայացված որոշումները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Արաքս գետի հիմնահարցերի միջգերատեսչական հանձնաժողովի 2017 թվականի աշխատանքային ծրագրի շրջանակում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում մատնանշված Հայաստանի Հանրապետության պետական սահմանային նիշերին հարակից խնդրահարույց տարածքներում ճշտման աշխատանքներ իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ):

2. Հաստատել աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Աշխատանքային խմբին՝

1) Մինչև 2017 թվականի ապրիլի 7-ը՝ իրականացնել տեղազննության աշխատանքներ Արաքս գետի հիմնահարցերի միջգերատեսչական հանձնաժողովի 2017 թվականի աշխատանքային ծրագրի շրջանակում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում մատնանշված Հայաստանի Հանրապետության պետական սահմանային նիշերին հարակից խնդրահարույց տարածքներում (այսուհետ՝ Տարածքներ)՝ ճշտելու նպատակով արդյոք Տարածքները ընդերքօգտագործման իրավունքով հատկացված են որևէ անձի.

2) Սույն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված տեղազննության գործողությունները իրականացնել Արաքս գետի հիմնահարցերի միջգերատեսչական հանձնաժողովի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ:

4. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ մինչև 2017 թվականի ապրիլի 10-ը ամփոփել և Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին ներկայացնել աշխատանքային խմբի կողմից իրականացված աշխատանքների արդյունքում ստացված տեղեկատվությունը:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի ընդերքի ոլորտի քաղաքականության հարցերը համակարգող տեղակալին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարի 2017 թվականի
ապրիլի 03-ի թիվ 43-Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՄԱՏՆԱՆՇՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՆԻՇԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՃՇՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Անուշավան Այվազյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության պետ- ՀՀ ընդերքի գլխավոր պետական տեսուչ (աշխատանքային խմբի ղեկավար)
Մարատ Բաղալյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության պետի տեղակալ- ՀՀ ընդերքի գլխավոր պետական տեսուչի տեղակալ
Արսեն Հովհաննիսյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության երկրաբանական և մարկշեյդերական վերահսկողության բաժնի պետ- ընդերքի հանրապետական ավագ պետական տեսուչ
Ֆրանց Հակոբյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի իրավաբանական և վերահսկողության վարչության վերահսկողության և վերլուծության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ
Հակոբ Պետրոսյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության երկրաբանական և մարկշեյդերական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ- ընդերքի հանրապետական

	պետական տեսուչ
Արմեն Անախասյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության երկրաբանական և մարկշեյդերական վերահսկողության բաժնի առաջատար մասնագետ- ընդերքի հանրապետական պետական տեսուչ
Վահե Աչոյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի գործակալության երկրաբանության, նորմատիվամեթոդական և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ